ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2016թ. **N ____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԲՆԱԿԱՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով «Ականաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Երևանի համայնքի միջև 2015 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագիրը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ «Ականաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Երևանի համայնքի միջև 2015 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագրի համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Լեոյի փողոցի թիվ 1 հասցեում սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հողամասում կառուցվող բազմաբնակարան շենքի 5-րդ հարկի 127քմ մակերեսով բնակարանի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելուց հետո, այն սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արտավազդ Փելեշյանին:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի մակերեսը կարող է փոփոխվել (ճշգրտվել) պետական գրանցման գործընթացի իրականացման ընթացքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲՆԱԿԱՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կինոռեժիսոր Արտավազդ Աշոտի Փելեշյանը 17.02.2016թ. դիմել է Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքում իր կինոդպրոցում վարպետաց դասընթացներ անցկացնելու խնդրի հետ պայմանավորված Երևանի կենտրոնական մասում իրեն անհատույց սեփականության իրավունքով բնակարան նվիրելու խնդրանքով:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ և ժողովրդական արտիստ, Խորհրդային հայ ռեժիսոր-վավերագրող, սցենարիստ, դերասան, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1979), ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ Արտավազդ Փելեշյանը ծնվել է 1938 թվականին Լենինականում: 1963-1967 թվականներին սովորել է ՎԳԻԿ-ի ռեժիսորական ֆակուլտետում (Լեոնիդ Քրիստիի արվեստանոց):

Ուսանողական տարիներին նրա նկարահանած ֆիլմերը բազմաթիվ մրցանակներ են ստացել, իսկ նա մեծ ճանաչում է գտել կինեմատոգրաֆիստների կողմից: 1972 թվականին Կուլիջանովի հետ համատեղ նկարահանել է «Աստղային ժամ» ֆիլմը, իսկ Միխալկով-Կոնչալովսկու «Սիբիրիադա» ֆիլմում հեղինակել է վավերագրական հատվածը: Փելեշյանի ամենահայտնի ֆիլմն է «Տարվա եղանակները», որը փայլուն նկարել է օպերատոր Միքայել Վարդանովը: Փելեշյանի սցենարով Վարդանովը նաև բեմադրել է «Աշնանային հովվերգություն» ֆիլմը: Փելեշյանը 1988 թվականին հրատարակեց «Իմ կինոն» գիրքը, ուր զետեղված էին տեսական աշխատանքներն ու սցենարները:

Ուսանելու տարիներին նկարահանել է «Լեռնային պարեկ» (1964), «Մարդկանց երկիրը» (1966), «Սկիզբը» (1967) վավերագրական ֆիլմերը, որոնք առանձնանում են գեղարվեստական ուրույն ոճով և կինոլեզվի թարմ արտահայտչամիջոցներով:1969 թվականին Փելեշյանը նկարահանել է «Մենք» ֆիլմը, որը ստացել է Օբերհաուզենի միջազգային կինոփառատոնի պատվավոր դիպլոմ, որտեղ առաջին անգամ օգտագործել է «տարածական մոնտաժի» հիմնատարրերից: Կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը Փելեշյանին անվանել է «բացառիկ կինոհանճար»:

Փելեշյանը նկարահանվել է «Մենք ենք, մեր սարերը» կինոնկարում: 2011 թվականին իտալացի կինոռեժիսոր Պիետրո Մարչելլոն նկարահանել է «Փելեշյանի լռությունը» վավերագրական ֆիլմը՝ նվիրված մեծ ռեժիսոր-վավերագրողին:

Միջազգային մամուլը և հանրաճանաչ գործիչները նրան համարել են մեր ժամանակների ամենատաղանդավոր կինոռեժիսորներից մեկը: Նրա տարածական մոնտաժը համարում են նոր խոսք կինոմոնտաժի տեսության մեջ՝ Էյզենշտեյնից և Վերտովից հետո:

Մրցանակները և պարգևները՝

- Օբերհաուզում կայացած Լիամետրաժ ֆիլմերի միջազգային կինոփառատոնի գրան պրի «Մենք» ֆիլմի համար (1970)
- ՀԽՍՀ պետական մրցանակ «Մեր դարը» ֆիլմի համար (1985)
- ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության առաջին մրցանակ՝ «Իմ կինոն» գրքում ներառված տեսական և գրական աշխատանքների համար, ինչպես նաև կինեմատոգրաֆիական մտքի զարգացման յուրահատուկ ստեղծագործական փորձն արտացոլելու համար (1987)
- ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1979)
- ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ (1995)
- Մեսրոպ Մաշտոց շքանշան (1996)
- Մեծ մրցանակ (2000, Փարիզ),
- «Դափնի» մրցանակ (2003),
- «Ոսկե ծիրան» կինոփառատոնում Սերգեյ Փարաջանովի անվան մրցանակ համաշխարհային կինեմատոգրաֆում ունեցած ավանդի համար (2006),
- ՀՀ վարչապետի հուշամեդալ (2012),

2015թ. Հոկտեմբերի 27-ին չեխական Յիհլավայի վավերագրական ֆիլմերի 19-րդ միջազգային կինոփառատոնի բացման արարողության շրջանակներում հանրահայտ կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանին հանձնվել է Համաշխարհային կինեմատոգրաֆում ունեցած վաստակի համար մրցանակը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կոմից տրված տեղեկատվության համաձայն՝ Արտավազդ Փելեշյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ բնակարանի կամ բնակելի տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Որոշման նախագծով նախատեսվում է «Ականաթ» ՍՊԸ-ի հետ 19.11.2015թ. կնքված պայմանագրի համաձայն՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով անհատույց փոխանցվող Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Լեոյի փողոցի թիվ 1 հասցեում սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հողամասում կառուցվող բազմաբնակարան շենքի 5-րդ հարկի 127քմ մակերեսով բնակարանը նվիրել Արտավազդ Փելեշյանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Բնակարան օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՆԱԿԱՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բնակարան օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՆԱԿԱՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բնակարան օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ